



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

385
L-78





ՊԱՅՄԱՆԵՐԻ
ՊՈԼԻՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱՐ

ՅԵՐԵԿ

AN 879

ՅԵԿ

ԱՅՍՈՐ

(ԹՈՒՐՔՍԻԲ)

• Տե



ԽՍԴԻՐ ԺՈՂՈՎ ՈՒՐԴ. ԿԵՆՏ. ՀՊՕ.Տ., ՄՈՍԿՎԱ, 1931

Հ Արմ.
2-3025a

ՀՀ-879
06 APR 2010

Թ. ԼՈՐԱՆԻՆ

385

L-78

ՅԵՐԵԿ

ՅԵՎ

ԱՅՍՈՐ

Թարգմ. Ամ.




ՀՎ. № 20487

ԿԱՇՄ ԺՈՂՈՎՐԴԻՒՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՀ ԱՏԱՋՈՒՅՆ
ՀՈՍԿՎԱ

1931

03 MAY 2013



Հայութեական գրադարան
Գօ. Բանձնութեական
ՀԱՅԱ-Արմ. ՀՀ
Ա. Մասնիկյան
Անդրանիկ Անդրանիկ

5584 - 87

ԽՆՉՈՒ 12 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԶԾՆՎԵՑԻՆՔ

Պիոներների մեջ կլսես այսպիսի խոսքեր.

— Ինչու 10-12 տարի առաջ չծնվեցինք:
Հիմի հոկտեմբերյան հեղափոխության թունդ
ժամանակը կլիներ: Ամեն կողմը քաղաքա-
ցիական կոփվ — հրացանը առ՝ քշի Բուղյոն-
նու յետևից, մի ճակատից մեկել ճակատը,
Պերեկոպը մերն ե՝ վոչ մի յերկաթե ցանկա-
պատ, վոչ մի խրամատ չի դիմանա, իսկ հիմի...
ինչ կա վոր զրավի մարդուն: Ֆրոնտները վե-
րացել են, կյանքը ճամբար մտել, ամեն բան
դառել է սովորական ու ձանձրալի: Վոչ
կոփվ, վոչ պայքար՝ վոր սիրտը տրոփի: հե-
րոսական գրոհների, հաղթության ու պար-
տության ժամանակները անց են կացել:

Սրդյոք այդպես ե: Միթե գրավիչ բան
չկա մեր որերում, միթե հեղափոխական
պայքարի համար տեղ չի մնացել:

Ճիշտ ե, Փրոնտները վերացել են, թըն-
դանոթները չեն գոռում, մեր զորքը հան-
գստանում ե, բայց հիմա ուրիշ ճակատ
ունենք, տնտեսական ճակատ, հեղափոխու-
թյամբ ձեռք բերած նվաճումները խորա-
ցնելու, մեր սեփական, սոցիալիստական
տնտեսությունն ստեղծելու ճակատը։ Պայ-
քարը գուցե ավելի դժվար, ավելի համառ
ե հիմի, ավելի ջանք ու տոկունություն ե
հարկավոր։ Հեղափոխական գործեր կատա-
րելու համար անհպառ տեղ կա։ Տնտեսա-
կան ճակատում մեր տարած ամեն հաղթա-
նակ նույնքան հեղափոխական ե և հերոսական։

Հեղափոխությունը չվերջացավ նրանով,
վոր հողը խլեցինք կալվածատերերից։ Պետք
ե ինքներս սովորենք հողը մշակել առանց
կալվածատերերի ոգնության, և մշակել
այնպես, վոր բերքը լինի տասնապատիկ։

Գործարաններին, հանքերին և յերկաթու-
ղիներին տիրապետելը բավական չե։ Հար-
կավոր ե աշխատանքը տանել նոր սո-
ցիալիստական հիմքերով, ուժեղացնել գոր-

ծարանի կարողությունը, եժանացնել ար-
տադրությունը, աշխատանքը թեթեացնել,
վոր քաղցր լինի, վոչ թե գերություն, պա-
տիժ լինի։ Պետք ե յերեան բերել բնու-
թյան ծոցում թագնված հարստություննե-
րը, ոգտագործել բնական բոլոր ուժերն ու
մարդուն ազատել ֆիզիկական ծանր հոգ-
նածությունից։

Բայց բնության անհաշիվ հարստություն-
ները պատրաստի չեն թափված։ Ամեն ան-
գամ բնությունից մի կտոր նվաճելու հա-
մար մղում են կատաղի պայքար, հարկա-
վոր են լինում հերոսական ջանքեր և զոհեր։

Պայքարը բնության դեմ, ինչպես ամեն
պայքար՝ լինի քաղաքացիական կոհմերի
ժամանակ, թե մեր որերի դասակարգային
պայքարը՝ հեղափոխականից պահանջում ե
նույնպիսի տոկունություն, կամքի ուժ,
նույնպիսի վոգերություն, նույնպիսի խի-
դախ հարձակումներ, նույնքան զիտություն
ու շնորհք, ինչպես ամեն անդամ սպիտակ-
ների դիրքերը գրոհելու ժամանակ։

Ինչպես աւասը տարի առաջ, քաղաքացին-
ական կոիմսերի որով հեղափոխական վորե-
վորությունը մղում եր մարդկանց դեպի
ճակատ, դեպի թշնամին, նմանապես հիմա,
ով գիտակից կերպով հարել ե հեղափոխու-
թյանը, ով խորը հավատում է մեր գործի
հաղթանակին, նա չի կարող չլծվել սոցիա-
լիզմը կառուցելու մեր ամենորյա չարքաշ
աշխատանքին, չի կարող մեր սոցիալիստա-
կան հսկա շինարարության աւենդովը չըռնվել.

„ԹԱԶԱ ԽԱԲԱՐ“

Արևախաշ, անապատ դաշտերի միջին թա-
ղա խաբարը ամեն կողմերից թռչում ե
թևագոր թռչունի նման—դեղից գեղը ձիա-
վորից ձիավոր։

Պատահում ե՝ ջիգիթը նիրենել ե ձիու քա-
մակին, սանձը թողել, ճամբեն մնացել ձիու
կամքին։ Մեկ ել դիմացից յերեւում ե ու-
րիշ ջիգիթ, ելի հոգնած, քրտնքաթափ,
քնաթաթախ։

Զիերն իրենք գալիս են կողքի, կանգնում։
— Խաբար կա։
— Կա. որը ցերեկով բայդուշ եմ տեսել։
— Վայ։
— Մի սկ աղվես եմ տեսել գիշերս։
— Վայ...
— Զորում նշանած աղջիկ են փախցրել,
փեսեն եկել ա գլխագինը տանի՝ չեն
տվել։ Կոխվ, զալմաղալ, փեսի ընկերութերը
գեղի նախիրը քշել, տարել են։
— Վայ...
Կանգնում են իրար կողքի, ճմոռում
աչքերը, թազա խաբարը կիսում իրար հետ,
բռնոթին հոտոտում ու բաժանվում։

Թազա խաբարը թռչում ե դաշտի միջին։
Հիմա ուրիշ խաբարներ են կաղակստանի
դաշտերում, հին խաբարներով զարմացող
չկա, լսող չկա։

Կաղակստանի գեղացին ուրիշ բան ե տե-
սել, նոր, ահագին, զարմանալի։

— Կարա կումի ավագուտների միջով, Բալ-
խաշի սվավան կամիշների մոտով, Զոկպարի

ձնապատ մեջքի տակով, բորանի, քամու, սառնամանիքի տակ, իլի, իրտիշի, կարակիլ գետերը կտրած, խնձորաշատ Ալմա-Աթայից մինչև հեռավոր Սեմիպալատինսկը, յերկրի յերեսին սողում եւ յերկաթե ճանապարհը, փնչում, սլանում եւ Շմադյան ձինք—պարավողը, ավելի ուժեղ, ավելի արագ, քան ամենից հարուստ բայի ամենից վազկան մադյանը:

— Քեզ թազա խաբար:
— Վայ...

Յ Ե Ր Ե Կ

Քնել եւ հնամյա կազակստանը—ցարական Ռուսաստանի իրավազուրկ գաղութը, Մրափել են հազարավոր տարիներով կոխստած դաշտերը, վորոնք զարնան ծածկվում են ծաղիկներով խալիչի նման, իսկ ամառը մրկում կազակստանի բարկ արևի տակ: Նիրել են Ալա-տառ սարի շղթաները, յերեմն քամու առաջ հուզվում են ջրերը Բալխաշի երեսին և անապատում, ալիքների

նման, կուտակվում եւ ավաղը: Մրափել եւ յերկիրը:

Մրափել եւ յերկիրը, թմրել անոթի, չարքաշ որվա ծանրության տակ: Աշխատանքի պապենական գործիքը հողից հաց չի հանում, յերբեմն յեղած բերքը խափանում եւ վնասատուն, տնքում են կազակները պատուհասի տակ, գաշտերը բռնվում են սառուցով, անասունները սառուցի տակից խոտ են ուտում, կտրատում վոտն ու մոռութը, լղարում են, չորանում: Բորանը քշում եւ անասուններին, խեղդում բքի մեջ, փռում դաշտի երեսին՝ գելի, բորենու կերակուր:

Կազակստանը տնքում եւ սովից, մրափում կրակոտ արկի տակ, չորանում ցրտի առաջ, կազակստանը կապոտած գերունման չարչարվում եւ մոլլաների, «սպիտակ միրուքավորների», բայերի, թագավորական շինովնիկների ձեռին, վորոնց կամքը որենք եւ մահացու:

Թշվառ, վայրենի, սնոտիապաշտ ու մուրացկան, տասնյակ տարիներ շարունակ

ապրեց հին կազակստանը, աշխարհից կտըրված, չորանի կյանքով, մինչդեռ յերկիրը լիքն ե հրաշալի գանձերով։ Ամառը հազար տեսակի հանքեր հազար գույներով ներկում են յերկը յերեսը ծաղիկների նման։

Ահա անսպառ մի գոտի՝ քարածուինի բյուրեղները շողշողում են ու աղամանդի նման...

Ահա յերկաթի կարմիր շերտեր...

Պապղում ե արծաջը...

Ահա պղինձը կարմիր ու կանաչ ծաղիկների նման փայլփլում ե արևի տակ։

Հարուստ ե կազակստանը, յերկը ծոցում անսաելի գանձեր կան թագնված, վուկին, արծաթն ու ածուխը կարծես չեն դիմանում հողի տակին, պատռում, դուրս են դալիս յերկը յերեսը։

Հնար չկա հաշվել, թե քանի տեսակ թանկագին մետաղներ կան երեկվա մոռացված, այդ խուլ յերկը ծոցում։ Մենակ ա-

ծուխի յոթանատուն տեղ կա յերեսան հանված։

Ածուխի գլխավոր շերտը կարագանտն ե, վոր ունի հինգ միլիարդ տոննա ածուխ։

Տուտ-Բերոգչուրը ամենապակասը յերկու միլիարդ տոննից ավելի ածուխի հիանալի պաշար ունի։

Տուտ-Եկիրասսուզը կես միլիարդ ավել ածուխի պաշար ունի։

Ահազին հարստություն պարունակող, ձեռ շտված, դեռ նույնիսկ չվորոշված ածուխի պահեստներ կան։

Հիանալի գույներով հիանալի հանքեր կան նազակստանի դաշտերում՝ ու ածուխից մինչև փայլուն արծաթը,

Կունտի-Բուլակ, Տալդա-Տյուրլի, Միլսայլովսկի հանքերը հարուստ են գրաֆիտով։ Սեմիպալատինսկից հարավ, Ագարլիկ սարերում մարգանեց կա, կարակումում՝ ասրեստ, միրունվենակի կանտոնում՝ սելիտրայի ահազին պաշար, Կույլտում՝ մէնդեղի հանք, Կղըլսույի ձորերում ծծմբի կալչե-

դանը ներկում ե ջրերը։ Յերկար գոտիյով
430 կիլոմետրի չափ, 160 կիլոմետր լայն-
քով տարածվում են վոսկու շերտեր։

Բայց Կազակստանի պարծանքը, նրա ա-
մենամեծ հարստությունը կազմում են
գունավոր մետաղները — պղինձը,
ցինկը, արծիճը, իդուր չե, վոր Կազակստա-
նը կոչվում ե «գունավոր մետաղների յեր-
կիր»։ Իդուր չե, վոր անգլիական խոշոր
գործարանատեր՝ Լեսլի Ուրկվարտը, այդ
հին գայլը, վոր մի ժամանակ կողոպտում
եր Ուրալի ու Կազակստանի հանքերը՝ պա-
տահաբար խոստովանեց, թե գունավոր
մետաղների արտադրությամբ Խոր-
հրդային Միությունը կարճ ժա-
մանակում կարող ե փոխարինել
Ամերիկային։

Կազակստանը նա համարում ե մեր հան-
քային հարստությունների հիմնական աղ-
բյուրը։

Ուրկվարտն իրավունք ունի։ Կազակստա-
նում միայն պղնձի հետազոտված հանքերը

—իսկ վորքան դեռ չեն հետազոտված —պա-
րունակում են 120 հազար տոննա մետաղ։
Կազակստանի արձնի պաշարները հասնում
են 320 հազար տոննայի, վոր համարյա կեսն
ե կազմում ամբողջ Միության ունեցած
արձնի։ Կազակստանի ցինկի պահեստը ա-
վելի քան 800 հազար տոննա յե, վոր նշա-
նակում ե Միության ցինկի պահեստի 70
տոկոսը, իսկ հազվագյուտ վոյլիքամի և
վանադիի շերտերը վոչ մի մրցակից չունեն
աշխարհի յերեսին։

Կազակստանի հանքերը զարմացնում են
վոչ միայն իրենց ահագին պաշարով, այլ և
վորակով։ Մշակության համար հիանալի
հատկություններ ունեն Կազակստանի մե-
տաղները։ Որինակ, Ուսպենսկու պղնձի
հանքը ամենից հարուստն ե աշխարհում։
Նա 25 տոկոս պղնձ ե պարունակում,
մինչեռ Ամերիկայում մեծ ուրախությամբ
կմշակեն պղնձի այնպիսի շերտեր, վորոնք
հազիվ 2-3 տոկոս պղնձ են պարու-
նակում։

Կազակստանի հանքերը հին ժագում ունեն. նրանք գոյացել են անհիշատակ ժամանակներում, աշխարհի հետ միասին: Յերբեմն կազակստանի դաշտերում կարելի յե հանդիպել փուլ յեկած հանքերի, վոր նշանակում ե, թե մի ժամանակ կազակստանի դաշտերում ապրել են ժողովուրդներ, վորոնք իմացել են մի շարք մետաղների գործածությունը:

Այդ ժողովուրդներն, ի հարկե, չեյին իմանում յերկրաբանություն, վոչ մի գիտության չեյին տիրապետում, բայց յերկրի յերեսը ներկող զանազան գույներով առաջնորդվելով՝ փորփում եյին հողը, հանում պղինձն ու յերկաթը: Բրոնզե դարի ժամանակ կազակստանի դաշտերում աշխատանքը յեռացել ե՝ գունավոր և թանկագին մետաղներ մշակելու համար:

Անցան դարեր և կազակստանը նորից թաղվեց խորը մթության ու մոռացության մեջ: Յերկրում ապրող հին ժողովուրդները մեռան, գնացին, վլան նրանց փորած հան-

քերը և կազակստանի անսահման դաշտերում նորից տիրեց լուռթյունը, քամին, փոշին, արևն ու գազանը: Անջրտի, անճանապարհ ու խոպան ե յերկիրը: Գարնանը ծաղկում են դաշտերը, իսկ ամառը՝ լերկ են,



անապատ, միայն յերկաթի, ածուխի, պղնձի և արծաթի հանքերն են փայլփլում լույսի տակ, ծակում աչքը:

Դաշտերը ծաղկել են մետաղի գույներով, դաշտերը փոել են իրենց գողը հազար տե-

սակ գանձերով առատ—«կուացիր, հավա-
քիր, գործարաններ հիմնիր, կոմբինատներ,
քաղաքներ»:

Բայց մեռած են դաշտերը, ճանապարհ
չկա, ճանար չկա, ձեռը չի հասնում հրաշալի
դանձերին:

Մինչև վերջին ժամանակները մի հատ
կարգին ճանապարհ չկար կազակստանում,
այդ ահագին յերկրում, վորի տարածության
վրա կարելի յէ տեղավորել ֆրանսիան ու
իտալիան միասին, այդ ահագին յերկրում
չկար մի ճանապարհ, վոր կտրեր յերկրը
մի ափից մյուսը:

Տոթը տիրում ե դաշտերին, դաշտերը
մատնված են սովի, «սոված դաշտեր» են
կոչվում: Թփեր են, ավագ, թփեր ու ավագ:

Կազակստանը «յեղել ե սովի ու միլիոն-
ների յերկիր»: Միլիոնների յերկիր, վորով-
հետև ահագին գանձեր մնացել են թագ-
նված: Սովի յերկիր—վորովհետև ժողո-
վուրդը նստած այդ գանձերի վրա, չի իմա-

ցել ինչ անի, սովից, համաճարակից կոտոր-
վել ե ինքն ու տավարը:

Կազակստանի ընակիչները հույս չեն
ունեցել, վոր իրենք կարող են ոգտագործել
իրենց յերկրի անբավ հարստությունները:
Յարական կառավարությունը մինչև վերջին
շունչը կազակներին տանջում եր ստրուկ-
ների նման, իսկ յերկիրը ծախում արտա-
սահմանի գործարանատերերին:

Կազակստանը տասնյակ տարիներով մնա-
ցել ե «սովի ու միլիոնների յերկիր»:

ԱՅՍՈՐ

Այսոր, նոր, մի չտեսնված բան հուզում,
ալեկոծում ե կազակստանի անսահման
դաշտերը:

Նախ, յերկնքում յերեացին յերկաթե
թոշուններ—սավառնակներ, վորոնք իջան
հարյուր մետրի վրա, վոր հետազոտեն յեր-
կիրը, թե ինչպես հարմար կլինի տանել
յերկաթուղագիծը:



Հետո յերկացին մարդկանց խմբեր, վոռնք զանազան գործիքներով ռկսեցին շափել ու նշաններ դնել յերկրի յերեսին:

Յերևաց, վոր սաստիկ դժվար ե վոչ միայն յերկաթուղու գիծը տանել, այլ նույնիսկ վորոշել նրա նախագիծը։ Հարկավոր եր վոչ միայն վորոշել, թե ինչպես պետք ե անց կենա Թուրքսիրը, այլև ընտրել նրա ուղղությունը, կտրել ամենահարմար ճանապարհը, վոր եժան նստի, վոր շոշափի բնակության կարեոր կետերը, վոր յերթեկությունը լինի եժան ու հարմար։ Միայն մեծ դժվարությամբ հնարավոր յեղավ նշանակել յերկաթուղագծի ամենահարմար ուղղությունը

Առանց քարտեզի, տեղացիների հակասական ցուցմունքներով, յերկրաչափները չափչում եյին դաշտերը։ Անապատ տեղերում, ուր տասը վերստի վրա մի կենդանի արարած չի պատահում, առանց փոխադրական միջոցների աշխատում եյին մարդիկ։ Համողելով, նվերներ բաժանելով,

ծխախոտ ու թեյ խոստանալով հազիվ կարողանում եյին կարճ ժամանակով մի ուղղ վարձել կամ յերկու յեզ։

Գնում եյին արևալսաշ, ամայի անապատներով։ մարդկանց յերեսի կաշին քանի անգամ պլոկվում եր, երվում, թշերն ու շըրթերը չորանում եյին, ճաքում։ Հաճախ սոված եր մնում եքսպեղիցիան, անջուր։ Մթերքն ուշանում եր, ջուրը շատ անգամ պարունակում եր զանազան աղեր, վորոնք լուծողականի նման ազդում եյին մարդկանց և անասունների վրա։

Այսպիսի տաժանակիր պայմաններով եքսպեղիցիան աշխատում եր մի քանի որ, հետո հայտնվում, վոր սխալ ճանապարհ են բռնել, վոր չարչարանքը իգուը ե յեղել, հարկավոր եր լինում վերադառնալ ու բռնել նոր ուղղություն, ամեն բան սկսել նորից։

Եքսպեղիցիան նորից գնում եր առաջ, սոված, անքուն, կրակուտ ավագների մեջ, և ամեն անգամ քարտեզի վրա կարմիր գծով նշանակում Թուրքսիրի ճանապարհը,

Այսպես դժվար եր թուրքակիրի հետազոտությունը։ Միայն ահազին չարշարանքներով հնարավոր եր լինում գործը տանել, բայց ջանքերը զուր չկորան։ Ճանապարհը, վոր առաջ 1481 կիլոմետր եր վորոշված, եքսպեդիցիայի համառ հետազոտումների շնորհիվ 1442 կիլոմետրի հասավ, իսկ վերը իջավ մինչև 1442 կիլոմետրի։ Հնարավոր յեղավ վոչ միայն գծել ամենահարմար ուղղությունը, այլև շինարարական ծախքերի գումարից խնայել մի քանի միլիոն։

Հնամյա կազակստանի անանցանելի դաշտերում կուլտուրական առաջին արշավանքը վերջացավ փառավոր հետևանքով։

Սարսափելի դժվար եր կառուցել թուրքսիրը։ Բորան, սառնամանիք, ձնի ահոելի բլուրներ, անտանելի տոթ, տեղատարափ, ավազոտ քամի, թունավոր ոճեր, կարիճներ և հազար տեսակ պատուհաս ծառանում ելին բանվորների առաջ, խանդարում, կտրում ելին առաջները։

Անապատ, լերկ ու արևատապ ավազուտներ են չորս կողմ։ Ավազը քամին բլուրների նման հավաքել ե, դիզել իրար վրա։ Փշոտ, ամեղնավոր թփերի միջով ուղտը չի կարողանում վոար փոխել։ Տասնյակ վերստի վրա փոփել են աղի շերտեր, վոր փայլում են արեի տակ աչք ծակելու չափ։ Կարակումը, վոր տեղացիները ևս ավազը են անվանում՝ կենդանության վոչ մի նշույլ շունի, և այդ անապատի միջով պետք եր պատռել ու տանել թուրքակիրը։

Աշխատանքի ամենադաժան ժամանակը ամառն եր։ Տոթը հասնում եր 60 աստիճանի։ Դեղին, մանր լիոշին ամպի նման պատռմ եր ոդը։ Փոշին ծծվում եր մարդու քիթը, բերանը, ականջները, մարմինը. շնչելու վոչ մի հնար չկար։ Փոշին ծակում եր աչքերը, բանվորները հիվանդանում ելին տրախոմայով, աչքերը ուռչում, կարմրութում ու լցվում ելին արյունով։

Քամին բարձրանում եր հանկարծ, ավազը դիզում ճանապարհին, թաղում յերկա-

թագիծը ահազին տարածությամբ, տակով
անում գործիքներն ու վրանները։ Անձրել
թափում եր հեղեղի նման, տրորում, քը-
շում եր ամեն բան ճանապարհին, և ամեն
անդամ ավելածից հետո նորից սկսում ելին
ամեն բան սկզբից՝ սրբում ավազը, նոր
առուներ փորում, ջուրը թափում, փոր
դուրս բերեն ճանապարհը։ Անասունները
տասնյակներով կոտորվում ելին քաղցից,
ծարավից, խրվում ու մնում ելին ավազի
մեջ կամ ուղղակի դառնում արևահար։

Զուրն ու հացը բերում ելին տասը
վերստ հեռավորության վրա։ Զուրը յեփ
եր գալիս ամանի մեջ, բայց նորից թվում
եր անմահական՝ ծարավից պապակված
բանվորների համար։ Արևախաշ, անապատ
դաշտերի միջին ջուր գտնելը տանջանք է
կամ ուղղակի անհնար։

Ջրի համար առանձին խմբեր ելին նշա-
նակված, վորոնք ամեն տեղ հետազոտում
ելին յերկրի յերեսն ու տակը, վոր մի
կերպ ջրի հնար գտնեն։ Ամբողջ ճանա-

պարհը վորվրում ելին, իսկ գունված ջու-
րը կամ սարսափելի աղի յեր լինում, կամ
լուծողական։ Քիչ եր պատահում, վոր ջուրը
խմելու համար պիտանի յեր համարվում՝
նախապես դաշտային լաբորատորիաներում
հետազոտվելուց հետո։ Ճանապարհի շինա-
րաբությունը տեսք յերեք տարի, վորի ըն-
թացքում 900 ջրի տեսակներ յերևան յեկան,
վորոնցից միայն 19 գործածության պիտանի։

Այս բոլոր դժվարություններից բացի,
բանվորները տանջվում ելին դաշտային հա-
զար տեսակ թունավոր ու մահացու սո-
ղունների ձեռին։ ոճ, կարիճ վիստում ելին
դիմատակին։

Հատկապես ժելանդա կոչված ձորը ոճե-
րի հայրենից եր։ Բանվորներն ստիպված՝
խմբերով բռնվում ելին պատերազմի, կո-
տորում ելին անհամար ոճեր և, ի հարկե,
իրենք ընկնում ելին հարվածի տակ։
Բժիշկներն ու սանիտարները պատրաստի
գեղերը ձեռներին՝ ոգնության ելին հաս-
նում ինչպես իսկական կովի ժամանակ։


Թուրքսիբի ավագուտ անապատներում
ահա թե ինչպիսի անողոք պայքար եր տե-
ղի ունենում:

Յեթե կարակորումի ավագուտներում բան-
վորներն ստիպված եյին աշխատել կրակուտ
յերկնքի տակ, ծարավ ու արևալսաշ, յեթե
նրանք ստիպված եյին կռվի բոնվել ոձերի ու
կարիճների հետ՝ Թուրքսիբի վրա աշխատող
մյուս խմբերը պիտի դիմադրեյին սառնամա-
նիքի, ձնակույտերի, քաղցի ու սառույցի:

Կուրդայը լեռնային տարածություն և
Պիշտեկի և Ալմա-Աթայի միջև:

Թուրքսիբը հնարավորին չափ արագ կա-
ռուցելու համար վորոշված եր ամառը տե-
ղափոխել ահազին քանակությամբ բեռներ
—ցեմենտ, փայտ, յերկաթ—Պիշտեկից Ալ-
մա-Աթա: Հրաման եր տրված շտապ կա-
տարել տեղափոխությունը Կուրդայում հար-
վածային աշխատանք կատարելու համար:

Սարսափելի գրություն եր: Բորանը բըռ-
նել եր սարերը, ձյունը քշում, թաղում եր
անառուններին, մարդկանց, սայլերը: Զեռն



ու վոտը չորանում եյին ցրտից, մարդիկ
փախչում եյին լեղապատառ, բայց յերկը
կամքը մնում եր անսասան, պետք եր դր-

մադրավիել ամեն գնով, և նորից գնում եր կարավանը համառ:

Հետևանքը յեղավ այն, վոր ամբողջ ճանապարհը ծածկվել եր սայլերով, անիվներով, տակառներով, սյուններով ու մեռած անասուններով՝ ինչպես իսկապես պատերազմի, նահանջի ու հարձակումների ժամանակ, և հաղթությունը տարված եր, բեռները սարերի միջով անցան, և դրա շնորհիվ Թուրքսիրի կառուցումը սաստիկ արագացավ:

Ավելի դժվարը սարերի միջով յերկաթագիծը տանելն եր, Ցրտից չեյին կարողանում քիթը դուրս բերել խրճիթներից և պետք եր աշխատել: Զկարծեք, թե խրճիթներում տաք եր ու դուրալի: Շտապ ու թեթև իրար կպցրած պատերի արանքից փչում եր քամին, վառելու վայտը պակասում եր բորանի պատճառով: Բանվորները վեր եյին կենում առավոտը կանուխ, թափ տալիս ձյունը վրայից, կոտրատում իրենց սառած մեջքն ու վոտը և կանգնում աշխատանքի:

Անպատճառ կամ հացը կպակասեր, կամ միսն ու վառելափայտը: Ումը պիտի տըրտնջաս, վոր բորանը չի թողնում վոտ փոխել:

Հեռագիր են ուղարկում իրար յետեից, բայց հեռագիրը տանում են յեզներով և պատասխանը յեզներով և գալիս:

Այսպիսի տանջանքներով, ձմեռվա ամիսներին հարձակվում եյին բանվորները Զոկպարի վրա:

Գարունը բացվեց, անձրեւ տեղաց հեղեղի նման:

Պետք եր արագ գործել — փորել ու աշխատել փոսերում, վոր լիքն եյին ջրով: Արտելները հրաժարվում են գործից, ափսոսում եյին ձիերին, միայն մի փոքր արտել (մեծ մասամբ հետևակ գետնափորներ) համառ կերպով ու չարաչար աշխատում ե ջրի մեջ մինչև ծնկները թաղված, և սակայն աշխատանքը կարևոր ե, հապաղելու գեպքում գործի հետագա ընթացքի վրա ծանր ազդեցություն կթողնի:


Այն ժամանակ կարգադրություն եւ ար-
վում ամբողջ գծի վրա:

Բոլոր ինժեներները, տեխնիկները,
սայլապանները թող հանեն իրենց սապոդ-
ները, տան բորիկ արտելին, վորն աշխա-
տում եւ զրի մեջ:

Գլխավոր ինժեների ողնական ինժեներ Բե-
լոկոնելը, վոր կանչված եր շտապ՝ բրիչն առած
ինքը մտավ ջուրը — փոխարինեց զիշերվա
հերթապահին: Բոլորի տրամադրությունը
փոխվեց, հոգնած բանվորները սիրտ առան
և յերեք որվա ընթացքում գործը կատա-
րին հասավ:

Յերկաթագիծը տարվեց Զոկպարի միջով:
Վաղը կդա առաջին մարդատար գնացքը:
Բայց ճաշին նորից անձրկը թափվեց. հե-
ղեղը քշեց, տարավ գծի տակից հողը, գիծը
մի քանի տեղով մնաց ողի մեջ կախված,
Առուները չելին փորել ժամանակին:

Իսկ մինչև գնացքի յերկալը մնացել եւ մի
խավար զիշեր, անձրկուա զիշեր: Ի՞նչ անել,
միթե պիտի հեռագրել, վոր գնացքը սպասի:



Պետք ե ամեն գնով ծածկել, ջրի
ավերածը: Ինչպես:

Հոգնած, քնաթաթախ արտելները չեն
ուղում աշխատել գիշերով: Տեղացի բան-
վորները արտնջում են, չեն ցանկանում
դիմ նորոգել.

Կազմվում ե հարվածային խումբ՝ բան-
վորներ, ինժեներներ և տեխնիկներ, թվով
100 հոգի, ուշ գիշերին, լապտերով, անձ-
րեկի տակ կըում են քարն ու հողը, նորո-
գում, կարգի բերում դիմ համառ կամքով:

Առավոտը, ուղիղ ժամը 4 և 30
բոպեյին, մինչև գնացքի հասնելը,
մի ժամ առաջ, վերջանում ե աշ-
խատանքը և կանոնավոր յերթե-
կեկությունը բացվում այդ գծով.

Թուրքսիբը կոփվ եր, անողոք կոփվ,
պետք եր նվաճել անապատ տարածություն-
ները, պետք եր տանել յերկաթագիծը ար-
յունատար անոթների նման, վոր շնչի, ծաղկի
Խորհրդային կազմակատանը:

Ի հարկե, ինչպես ամեն մի կռվի ժամա-
նակ, անպակաս յեղան զոհերը: Թուրքսիբը
տասնյակ բանվորների կանքը խլեց: Այդ
բանվորները հիվանդությունների, դժբախտ
պատահարների զոհ գնացին՝ բայց միշտ
աշխատանքի դիրքերում:

Այսպես ե նկարագրում պաշտոնական
դոկումենտը բանվորների մահվան մասին.
«1929 թվի դեկտեմբերին գնացքը Ժե-
լանդայից դեպի Ժերմալա շարժվելու ժա-
մանակ, փոթորկի, սառնամանիքի պատճա-
ռով շուր յեկավ: Մեքենավար ընկեր Եվլա-
զինի վուտները մնացին պարավողի տակ:
Վոչ մի հնար չկար դուրս բերել ծանրու-
թյան տակից: Բացի զրանից, կաթսայի
տաք ջուրը թափվում եր վրան: Զուրը
շուտով սառեց, Եվլազինի շորերը սառեցին
ու փետացան: Ընկերը 17 ժամ շարունակ
մնաց քամու ու սառույցի տակ՝ 50 աստի-
ճան ցրտին:

Բժշկական ոգնությունը հասավ Ժելան-
դայից և հետո Այսգուղից: Վիրավորին տե-

Դափոխեցին, տաքացրին ու դարմանեցին
մինչև բոլորովին ուշքի յեկավ, բայց սառ-
տիկ մըսած լինելու պատճառով թոքերի
բորբոքումից մեռավ յերկու որից»:


Ահա ուրիշը.

«Չնայած սարսափելի քամուն ու ցրտին՝
բանվորները հավաքում ու սարքում եյին
կամուրջը իրափշի վրա: Յուրա առավոտին
15 մետր բարձրությունից սայթաքեց և ըն-
կավ բանվոր Սոկոլովը: Ընկերը ջարդ ու
փշուր յեղավ»:

Յեկ վերջապես.

«Իրափշի կամուրջը կառուցելիս, յերկաթա-
ցանցը ծանրության չղիմացավ ու պայթեց
սոսկալի վորոտով: Յերկաթի կտորներից
մեկը կպավ մի բանվորի, ծակեց քուրքը,
շորերը, ծակեց կրծքի վանդակն ու դիպավ
սրտին»:

Թուրքսիբը կոիվ եր՝ հաղթանակով և զո-
ներով: Թուրքսիբի փառավոր աշխատանք-
ները վերջացան 17 ամիս առաջ այն ժա-
մանակից, վոր նշանակել եր կառավարու-



Թուրքի թուրքսիրի աշխատանքները հերոսական որինակներ տվին։ Մինչդեռ Ամերիկայում յերկաթագիծը որեկան հազիվ շիլոմետր ե կարում, թուրքսիրը որեկան $2^{1/2}$, մինչև 3 կիլոմետր ընթանում եր, թողնելով Ամերիկայի թափը իր յետեւ։

Այդ մեծ հաջողությունը ձեռք բերվեց վոչ միայն շնորհիվ գործի կազմակերպված վիճակին, թուրքսիրը խոշոր առավելություն ուներ Ամերիկայի դիմաց՝ բանվորներն ու մասնագետները բանում եյին մի շունչ, մի մարդու նման, բոլորը գործի սիրով տողորված, թուրքսիրը կառուցում եր հեղափոխական մի բանակ՝ գիտակից և ամրակուռ, վոր պիտի ավարտեր իրեն բաժին ընկած գործը։

Ահա քեզ սքանչելի որինակ շինարարության ասպարիզում։ Միթե անձնազոհության, հերոսական մարտնչումների քիչ տեղ կա, քան Պերեկոպի քաղաքացիական կռիվների ժամանակ, Միթե Կարակումի կրակոտափազները, փշերն ու քամին պակաս հա-

կառակորդներ են, քան Դենիկինն ու Շկուրոն։ Միթե հարձակումը Զոկապարի վրա, ցրտի, բորանի, անձրեկի տարափները թեթե են ավելի, քան կոիկը Կոլչակի դեմ։ Միթե մեկ չե նպատակը, լինի դա Պերեկոպի կոփիներում, թե Կազակստանի անսահման անապատներում։

Միենույնն ե նպատակը — կոիկ և պայքար նոր կյանք հիմնելու համար, կոմունիզմի համար։

Փառավոր ե այն ապագան, վոր կրերի թուրքսիրը։

Վ Ա Ղ Ը

Վաղը, յերբ արյան յերակների ձեռով կկտրտվի Կազակստանը յերկաթե ոելսերով՝ կկենդանանան, կծաղկեն անսահման անպատ դաշտերը։


Իզուր չե, վոր Կայսակի բնակիչների համար թուրքսիրը դառնում ե գուրգուրանքի առարկա. պարավոզը, վորին առաջ սատանի սայլ» եյին կոչում։ հիմա համարում են

ուն մադյան», իսկ վաղը, նույն կազակը, վոր լեղապատառ խուսափում եր պարավողի ձենից, վոր գնում եր ալկոր ծերունիների մոտ՝ թե ինչ են մտածում նոր աղետի առաջն առնելու համար, այդ կազակը վաղը կաշե բլուզը հագին, ինքը կնստի մեքենավարի տեղն ու կտանի գնացքը:

Հեռու չե այն որը, յերբ կմեռնի սրբազն իշանի, —կը ոնապետի իշխանությունը: Թուրքսիրի կազակ մեքենավարը չի գնանրա մոտ խորը հավատով, իսկ վորտեղ հավատը կվերանա՝ սրբերը շինելու բան չեն ունենա:

Սրբազն իշանի ու ծերունի իշխանավորների հետ կվերանա պապենական ամչարը, հողագործական այդ վողորմելի գործիքը:

Կազակստանի դաշտերում կբերվեն իննը հազար տրակտորներ: Հոգնած ու դանդաղ ուղղերին կփոխարինեն 200 հազար յերկաթե ձիեր, տասն անգամ կավելանա կազակստանի ցորենի ապրանքային արտադրությունը:



Բայերի նախկին հոտերը կմիացվեն ա-
նասնաբուծական կոլխոզների մեջ, կաճեն,
կղորանան կանոնավոր խնամքի, կերի ու
բժշկական հսկողության շնորհիվ:

Հնգամյակի վերջին ՌՍՖԽՀ ամբողջ հո-
տերի հինգերորդական մասը կարածի կա-
զակստանի դաշտերում:

Սեմիպալատինսկի, Ալմա-Աթայի, Ակմո-
վինսկի շրջաններում կշինվեն կաշվի և բրդի
գործարաններ: Ֆրունզե և Կարալլո քաղաք-
ներում կշինվեն հսկայական ձիթհաններ:
Կազակստանի բոլոր մասերում կծխան բազ-
մաթիվ ծխնելույզներ, բազմաթիվ գործա-
րաններ կմշակեն անասնաբուծական արտա-
գրանքներ՝ կաշի, մորթի, կաթ, յուղ, պանիր
և պարարտանյութեր. մենակ բրդի գործը
ահազին ծավալ կստանա և կունենանք ապ-
րանքների հսկայական պաշար:

Խուլ ու հեռավոր Կարսակալայում կաձի
Կարսակպայի կոմբինատը: Զեղկազգանի
պղնձահանքերը, վոր պարունակում են կես
միլիոն տոննա մետաղ՝ կական մշակվել, և

տարեկան 10 հազար տոննայից ավելի պղինձ
կտան յերկրին:

Կարսակպայից հյուսիս-արևելք, վորտեղ
Թուրքիբեցյերկաթփիծ կտարվի մինչև Սերգի-
պոլն ու հեռուն՝ մինչև Ակմոլինսկ, կհիմնվի
Սպասսկու արդյունաբերական կոմբինատը:
Այդ կոմբինատը կաշխատի Կարագանտի ած-
խով և Ուսպենսկու պղնձով ու տարեկան
կտա 6 հազար տոննա պղինձ՝ հենց 1933
թվին:

Հարավ-արևելք՝ Բալխաշ լճից 25 կիլո-
մետր հեռավորությամբ կծառանա Բալխաշի
վիթխարի պղնձագործարանը, ամենից մեծը
Կազակստանում, և տարեկան կտա 15 հա-
զար տոննա մետաղ:

Ցեվ վերջապես, դեպի հյուսիս-արևելք՝
Կազակստանի այդ հեռավոր մասում ծավալ
կտանա Ռիդդերի կոմբինատը: Հինգ տա-
րուց այդ կոմբինատը կտա 17 հազար
տոննա ցինկ, 12 հազար տոննա արծիճ, 2400
կիլոգրամ վոսկի, 9600 կիլոգրամ արծաթ և
700 հազար տոննա պղինձ:

Կազակստանի գունավոր մետաղների արդյունաբերությունը կաճի 1500%։ Կազակստանը կդառնա գունավոր մետաղների խոշոր յերկիր։

Սև, ադամանդե ծաղիկների նման կբացվեն ու կաճեն կազակստանի ածուխի հանքերը։

Կազակստանի պարծանքը կազմող կարագանտը Սպասսկու պղնձի կոմբինատին կտա 120 հազար տոննա ածուխ։

Ելիբաստուզը Թուրքսիբի մետաղագործական արդյունաբերության համար իր ծոցից կընծայի 200 հազար տոննա ածուխ, իսկ իլի գետափներն իրենց ածուխով կապահովեն Թուրքսիբի բոլոր ճանապարհները լիովին։

Վերջապես, կազակստանը կտիրանա մի նոր, դեռ չտեսած հարստության՝ ելեքտրական ուժի։ Ելեքտրական տնտեսությունը, 200 հազար բանվորի համար ապահովում ե 11 հազար կիլովատ։ Ուրի գետի վրա կշինվի «Կազակստանի Վոլխովստրոյը» իր եներգիան կճամբի Ռիդդերի կոմբինատին։

Կարթնանաիր խորը քնից հնամյա կազակստանը. խոպան, աղքատ յերկիրը կապը սոցիալիստական կյանքով, տասնյակ և հարյուրավոր սովխողներ, արդյունաբերական կոմբինատներ, դպրոցներ, ակումբներ ու գրադարաններ կծածկեն յերկիրը։

Ահա թե վորն ե Թուրքսիբի նշանակությունը, հսկա նշանակությունը վոչ միայն մեր Միության համար, այլև ամբողջ աշխարհի։

Թուրքսիբը նաև մի ուրիշ պարզեց ե տակս յերկրին—բամբակ։

Միջին Ասիայի դաշտերում հացն ու բամբակը մշտական կովի մեջ են։ Հացն ու բամբակը կատաղի հակառակորդ են իրար մի կտոր հողի համար, թե վորը պիտի ցանել, իսկ հողը քիչ ե միջին ասիական խոպան ու ավագոտ դաշտերում։ Մշակության համար մի կտոր պիտանի հող ստանալու համար բնակիչները չարաչար աշխատում են, նեռավոր տեղերից ջուր են բերում առուներով, վոր անապատը կենդանանա։

Հողը քիչ ե, յեղած հողը պիտի ցանել
ցորեն կամ բամբակ, մինչդեռ յերկուսն ել
հարկավոր են բնակիչներին: Վերջին տարի-
ները ցորենը բամբակի տեղն ե բռնել, վո-
րովհետև ամենից առաջ ուտելու հաց ե
հարկավոր: Բամբակի համար հող չի մնում,
բամբակը նեղվում ե, նվազում: Անասնա-
պահ, թափառական բնակիչները չեն ուզում
նստել հողի վրա, արեից ու ավազից մշա-
կության համար պիտանի հող խելը հեշտ
չե, իսկ յերկրագործ բնակիչները տանջան-
քով ինսամած մի կտոր հողի վրա գերադա-
սում են հաց ու բրինձ ցանել, մինչդեռ
բամբակի գործը պահանջում ե ավելի
խնամք ու դժվարություն: Գյուղացին իրա-
վունք ունի, վորովհետև նա չի կարող յե-
ռակի գնով հաց առնել՝ Սիբիրից ու մերձ-
գույքան դաշտերից բերված:

Բամբակը պետք ե մեզ, մենք
բամբակի համար ամեն տարի 120
միլիոն փող ենք ուղարկում արտա-
սահման:

Յեվ ահա, ապրիլի 25-ին, Բիժե փոքրիկ
կայարանում միացան Թուրքսիրի: յերկու
թերեր, մի յերկաթագիծ, վոր գալիս ե հա-
րավից՝ Միջին Ասիայից և գնում ե դեպի
Սիբիր, և մյուսը՝ Սիբիրից գնում ե դեպի
Միջին Ասիա:

Նոր ճանապարհը դրությունը
հիմնովին կփոխի:

Եժան և կարճ ճանապարհով միացան
հացառատ Սիբիրն ու Կազակստանի հարա-
վային գավառները, Միջին Ասիան: Թուրք-
սիրը կըերի 800 հազար տոննա Սիբիրի հաց,
տոննան 18 ոռություն եժան՝ կտա գյուղացի-
ներին, տարեկան 14 միլիոն ոռություն գու-
մար Թուրքսիրը խնայողություն կտա հացի,
և միջին ասիական գյուղացին
հացով ապահով՝ կսկսի բամբակ
մշակել:

Դա հերիք չե:

Նոր ճանապարհը Զու և Իլի գետավնե-
րին կստեղծի բրնձի պլանացիաներ 150
հազար հեկտար տարածությամբ: Միջին

Ասիան բընձի պակասություն չի քաշի և
նոր հողեր կազատի բամբակի հա-
մար:


Թուրքիբը բամբակին հսկայական թափ
ու ծավալ կտա: Տասնյակ հազար հեկտար
տարածություն կտրամադրվի բամբակին,
վորն այդ հողերի որինավոր տերն ե յեղել:

Թուրքսիբը բամբակին կպարզեցի
մի միւլիոն հեկտարի չափ ջրած
հողեր:

Գյուղացին լավ գիտե, վոր բամբակը շա-
հավետ ե ցանել, բայց մինչև հիմա հնար
չուներ և սոված եր մնում: Բամբակը նրա
գրությունը ահագին չափով կըարվոքի:

Բամբակը մի ուրիշ թշնամի ունի՝ նա-
հապետական ամչարը, վոր կանհետանա
անմիջապես:

Թուրքսիբը մի կողմից Միջին Ասիա կփո-
խագրի հաց, բրինձ, ածուխ, փայտ, իսկ
մյուս կողմից, Որենբուրգի ու Տաշքենտի
գծով կըերի 13 հազար տրակտորների
պատկառելի բանակ:




Ի՞նչպիսի ողնություն կլինի դյուղացուն,
11 միլիոն յլ բկաթե բանվորներ, վորոնք
նոր յեղանակով կմշակեն բամբակի հողերը:
Ամչարի հետքը չի մնա, վորովինետե Մի-
ջին Ասիային կտանք —

1^{1/2} միլիոն գյուղատնտեսական գործիք-
ներ, ամենաաղակասը 10 հազար ավտոմո-
բիլ, վորոնց մասերի հավաքը տեղի կու-
նենա Տաշքենաի գործարանում:

Ցեթե ավելացնենք այն, վոր Միջին Ասիան
կտանա 50 նոր բամբակ մաքրելու և 10 ձիթ-
էան գործարաններ, պարարտանյութեր,
ապա զարմանալի չի լինի այն հսկայական
արդյունքը, վոր կտա բամբակի հաղթանակը:

Թուրքիաը կառուցելուց յերեք տարի հե-
տո բամբակի բերքը կավելանա 40% -ով,
կ տա 730 հազար տոննա, մինչդեռ մեր
բոլոր գործարանները, վորոնք բամբակ
են մշակում՝ պահանջում են ընդամենը 690
հազար տոննա:

1933 թվին մեր գործարանները կբանեն
միայն մեր սեփական խորհրդային բամբա-



կով, և նույնիսկ մի տոննա չենք բերի ար-
տասահմանից:

Ահա թե ինչ մեծ հեղափոխություն կա-
ռաջացնի Թուրքսիրը բամբակի դաշտերում,
ինչպիսի հետեանքներ կտա Միջին Ասիայի
և ամբողջ Միության համար:

Ահա թե ինչու փոքրիկ Բիժե կայարա-
նում տեղի ունեցած հանդեսը նույնքան
մեծ ուրախություն պատճառեց թե Կազա-
կսաանի գյուղացուն և թե տեքստիկ բան-
վորներին:

Ահա թե ինչու նույնքան փա-
ռափոր և հեղափոխական գործ կա-
տարեցին թե նըանք, ովքեր որով
և հրացանով կովեցին Պերեկոպի
տակ, և թե նըանք, ովքել բահ ու
բըիչով կառուցին Թուրքսիրը:

10 40т.

Цена 10 кс

21344 Н Арм.
2-302



Вчера и сегодня
(Турксиб)
(перев. с русского)

На армянском языке

V

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
Москва, центр, Никольская, 10

ՀՀ Ազգային գրադարան



NL0222944

55.139

H APM.
9-30952